ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2018

Շ Է Ն



Գյուղական կոոպերատիվների դերը մեծ է Հայաստանի Հանրապետության համար, քանի որ գյուղատնտեսությունը երկրի տնտեսական զարգացման առանցքային ոլորտներից մեկն է և գյուղական համայքների բնակչության մեծ մասի համար հանդիսանում է եկամտի հիմնական աղբյուր: Կոոպերատիվները հնարավորություն են ստեղծում՝ ավելացնել ֆերմերների եկամուտները գյուղատնտեսական հողաբաժինների կտրտվածության ու փոքրության, համարժեք ենթակառուցվածքների անբավարարության, որակյալ ագրոներդրանքի ու ագրոնոմիական մասնագիտացված ծառայությունների հասանելիության պակասի, արտադրանքի իրացման և այլ դժվարությունների պայմաններում:

Ինչպես ցույց տվեց մեր վերջին տարիների փորձը, ներառական գյուղական կոոպերատիվները նպաստում են աղքատության նվազեցմանը, աշխատատեղերի ստեղծմանը, զբաղվածության ապահովմանը և գյուղատնտեսությունից ստացվող եկամուտների աճին: Ֆերմերների համատեղ գործողությունները նպաստում են գիտելիքների և հմտությունների ձեռքբերմանը, ներդրումների հայթայթմանը և ռեսուրսների մոբիլիզացմանը:

2015 թվականին «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ընդունված ՀՀ օրենքը գնահատվեց որպես դրական փոփոխություն, սակայն էական արդյունքների հասնելու համար անհրաժեշտ էր վերանայել նաև այլ հարակից իրավական ակտեր: Վերջինս տեղի չի ունենում, և որպես արդյունք՝ գրանցված գյուղատնտեսական կոոպերատիվների մեծ մասը չեն գործում, այն դեպքում, երբ գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացումը կառավարության գերակա խնդիրներից մեկն է:

Թեև մեզ հաջողվեց որոշ չափով բարելավել հարկային դաշտը գյուղերում գործող սպառողական կոոպերատիվների գործունեության համար, գյուղատնտեսական կոոպերատիվները շարունակում են պետության կողմից դիտվել որպես սովորական բիզնեսներ և հենց այդ պատճառով գործունեություն չեն իրականացնում: Հաշվի առնելով կոոպերատիվների երկակի դերը որպես «միավորում» և «սոցիալական տնտեսության ձեռնարկություն»՝ օրենսդրությունը պետք է սահմանի այնպիսի երաշխիքներ, որպեսզի անձինք կարողանան լիարժեքորեն իրացնել իրենց միավորվելու ազատության իրավունքը, ինչպես նաև՝ օրենսդրությամբ հաշվի առնվեն կոոպերատիվների առանձնահատկությունները և նրանց դրական ներդրումը իրենց անդամների կյանքի և համայնքների բարելավման գործում:

Ելնելով այն ակնհայտ ճշմարտությունից, որ ներառական կոոպերատիվները նպաստում են մարդկանց տնտեսական և սոցիալական ինտեգրմանը, ինչպես նաև նրանց իրավունքների պաշտպանությանը, Շենը մոտակա տարիներին իր բոլոր գործառույթների հետ համատեղ պետք է շարունակի պաշտպանել գյուղերում միավորված ֆերմերների շահերը:

Շեն ԲՀԿ վարչություն

1 Տնտեսական գործունեությունը խթանող ծրագրեր

1. Անգեղակոթի սպառողական կոոպերատիվին (ՍԿ) զտման և քամհարման կայանի վերակառուցման և վերամշակման սարքավորումների տրամադրում, գյուղտեխնիկայի, գյուղգործիքների, թունաքիմիկատների, անասնաբուժական նյութերի և համակարգչային տեխնիկայի տրամադրում
2. Արեգունի ՍԿ-ին գյուղտեխնիկայի, գյուղգործիքների, թունաքիմիկատների, անասնաբուժական նյութերի և համակարգչային տեխնիկայի տրամադրում
3. Փամբակի ՍԿ-ին գյուղտեխնիկայի, գյուղգործիքների և թունաքիմիկատների, անասնաբուժական նյութերի և համակարգչային տեխնիկայի տրամադրում
4. Գեղամասարի ՍԿ-ին գյուղտեխնիկայի, գյուղգործիքների և թունաքիմիկատների, անասնաբուժական նյութերի և համակարգչային տեխնիկայի տրամադրում
5. Շաքիի ՍԿ-ին գյուղտեխնիկայի, գյուղգործիքների և թունաքիմիկատների, անասնաբուժական նյութերի և համակարգչային տեխնիկայի տրամադրում

6. Արմավիրի մարզի Շենիկ գյուղում «Օրգանական միրգ արտադրողների» ՍԿ-ի համար սառնարանային տնտեսության և կաթիլային ոռոգման ցուցադրական համակարգի կառուցում
7. Տավուշի մարզի Գոշ և Խաչարձան գյուղերը միացնող տուրիստական կածանի կառուցում
8. Արագածոտնի մարզի Ծաղկաշեն գյուղի ոռոգման ներքին ցանցի վերակառուցում
9. Լոռու մարզի Լեռնավան գյուղի ոռոգման ջրագծի վերակառուցում (2-րդ փուլ)
10. Արմավիրի մարզի Շենիկ գյուղում համայնքային կենտրոնի տարածքում արևային ֆոտովոլտային կայանի կառուցում

11. «Այրում սոցիալական զարգացման» հիմնադրամին պտղի չորանոցի տրամադրում, մրգի սառնարանի կառուցում
12. «Բերդավան» սպառողական կոոպերատիվի համար մրգի սառնարանի կառուցում
13. Տավուշի մարզի Կոթի, Ոսկեվան և Բաղանիս համայնքների «Սահմանապահ» հողագործ ՍԿ-ին հողաֆրեզի և ցողիչների տրամադրում
14. Գեղարքունիքի և Վայոց Ձորի մարզերի մարքեթինգային խմբերի համար տեսական և գործնական սեմինարների անցկացում
15. Արմավիրի մարզի Արգինա համայնքին արևային չորանոցների և այլ գույքի տրամադրում

2 Ենթակառուցվածքների վերականգնում և մարդասիրական ծրագրեր

1. Արագածոտնի մարզի Թաթուլ համայնքի խմելու ջրագծի վերակառուցում
2. Գեղարքունիքի մարզի Թթուջուր գյուղի մանկապարտեզի և սպորտհրապարակի վերանորոգում և կահավորում
3. Գեղարքունիքի մարզի Մարտունի գյուղի դպրոցի սպորտդահլիճի վերանորոգում
4. Լոռու մարզի Շահումյան գյուղի մանկապարտեզի կահավորում

5. 1000 ծառի տրամադրում Արագածոտնի մարզի Կաքավաձոր գյուղին

6. Շիրակի մարզի Սարատակ գյուղի մանկապարտեզի վերանորոգում և կահավորում

7. Գեղարքունիքի մարզի Դպրաբակ գյուղի խմելու ջրագծի վերակառուցում

8. Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության հետ համագործակցությամբ կարի մեքենաների տրամադրում 340 կարիքավոր ընտանիքի

9. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի սոցիալական կենտրոններին 60 կարի մեքենայի տրամադրում

10. Արագածոտնի մարզի Լուսակնի դպրոցին, Տավուշի մարզի Վազաշեն, Բերդավան, և Այրում գյուղերի դպրոցներին օգտագործված համակարգիչների տրամադրում

11. Ակնոցներ Հայաստանի համար ծրագրի իրականացում Լոռու մարզում

12. Եղնաջուր գյուղում ամառային ճամբար Շիրակի մարզի անապահով ընտանիքների երեխաների համար

3 Կարողությունների հզորացման ծրագրեր

ԵՄ «Համապարփակ աջակցություն Հայաստանի լեռնային շրջանների կայուն զարգացմանը» ծրագրի շրջանակներում Անգեղակոթ, Շաղատ, Շաքի, Փամբակ, Արեգունի և Գեղամասար գյուղերում կազմակերպված դասընթացներ.

1. Բանջարեղենի և կանաչեղենի ջերմոցային արտադրություն
2. Գյուղատնտեսների վերապատրաստում
3. Դասընթաց կոոպերացիայի սկզբունքների և արժեքների վերաբերյալ
4. Կոոպերատիվների կառավարում
5. Կենսագազի արտադրություն
6. Կոոպերատիվների անասնաբույժների վերապատրաստում
7. Կոոպերատիվների հաշվապահների վերապատրաստում
8. Կտավատի յուղի արտադրություն
9. Հատապտուղների և խոտաբույսերի չորացում
10. Հացազգիների մշակության լավագույն փորձ
11. Հացահատիկի վերամշակում. ձավարի արտադրություն
12. Մարքեթինգ կոոպերատիվների համար
13. Վայրի հավաք. շրջակա միջավայրի համար անվնաս մեթոդներ

HEKS/EPER «Պտղաբուծության զարգացման միջոցով Վայոց Ձորի և Գեղարքունիքի մարզերի գյուղական տնային տնտեսությունների կենսապահովման բարելավում» ծրագրի շրջանակներում Ռինդ, Չիվա, Արենի, Արփի, Գետափ, Հերմոն, Տարաթումբ, Քարագլուխ, Շատին, Աղավնաձոր, Խաչիկ, Լուսակունք, Ակունք, Ծովակ, Շատջրեք, Կարճաղբյուր, Խաչաղբյուր, Գեղամասար, Մեծ Մասրիկ գյուղերում կազմակերպված դասընթացներ.

1. Պտղատու ծառերի էտ և տնկանյութի ճիշտ ընտրություն
2. Պետական աջակցության գյուղատնտեսական վարկերի փաթեթների հետ ծանոթացում
3. Դրամաշնորհային ծրագրի ներկայացում, դրամաշնորհային փաթեթը լրացնելու կարգի ուսուցում
4. Ինչպես մշակել բիզնեսի զարգացման ռազմավարությունը
5. Դրամաշնորհային ծրագրի ներկայացում, դրամաշնորհային փաթեթը լրացնելու կարգի ուսուցում
6. Պտղատու ծառերի էտ և տնկանյութի ճիշտ ընտրություն
7. Փոխայցելություն ինտենսիվ պտղաբուծությամբ և խաղողագործությամբ զբաղվող տնտեսություններ
8. Հայաստանի գյուղատնտեսական ներդրանք ներկրող/վաճառող առաջատար ընկերությունների ճանաչողական այցելություն
9. Օրգանական գյուղատնտեսության կառավարման պլանի և 2018թ. մշակության ու խնամքի ժամանակացույցի կազմում
10. Փոխայցելություն Վարդենիսի շահառու ֆերմերների համար Սյունիք ՀԿ տնկարան և ցածրաճ այգի
11. Բարձրարժեք կամ հավելյալ արժեքի գյուղատնտեսություն
12. Ինտենսիվ արտադրական պտղատու այգու գործունեության ներկայացում
13. «Եվրոքիմ» (Ռուսաստան) հանքային պարարտանյութեր արտադրող ընկերության ներկայացումը շահառու 2 մարզերի այցելուներին
14. Փոխայցելություն չրագործական կայացած ձեռնարկություն
15. Այցելություն պտղի վերամշակման ուղղությամբ մասնագիտացված վերամշակող ձեռնարկություն
16. «ՍԻԹԻ» Սուպերմարկետների ցանցի թարմ մրգի և բանջարեղենի մթերման կենտրոնի հետ ծանոթացում
17. Վայոց Ձորի և Գեղարքունիքի մարզերի մարքեթինգային խմբերի և դրամաշնորհառուների տարեկան ամփոփիչ հանդիպում

ԳՀՄՀ (IFAD) «Բուսաբուծության ներառական արժեշղթաների խթանումը Հայաստանում, Վրաստանում, Մոլդովայում և Ղազախստանում» ծրագրի շրջանակներում Այրում, Շենիկ, Շաղատ, Կոթի, Բերդավան և Աշոտավան գյուղերում գործող սպառողական կոոպերատիվների անդամների համար կազմակերպված դասընթացներ.

1. Պտղատու այգիների վաղ գարնանային խնամքի աշխատանքներ
2. Պտղատու և խաղողի այգիների վաղ գարնանային խնամքի աշխատանքներ
3. Պտղատու այգիների գարնանային խնամքի և հիվանդությունների ու վնասատուների դեմ պայքարի աշխատանքների կազմակերպում
4. Օրգանական ռեհանի ցանքի կազմակերպման պրակտիկ խորհրդատվություն
5. Ձերմոցի շահագործում և բանջարեղենի տեղական արժեքավոր սորտեր
6. Պտղատու այգիների հիմնական հիվանդությունների և վնասատուների դեմ արդյունավետ պայքարի կազմակերպում
7. Խաղողի այգիների հիմնական հիվանդությունների և վնասատուների դեմ արդյունավետ պայքարի կազմակերպում
8. Տնամերձ այգիների հակակարկտային ծածկերի կիրառության մոդել և խաղողի այգիների կաթիլային ոռոգման առանձնահատկությունները
9. Պտղատու մշակաբույսերի մշակության, պարարտացման և ոռոգման, էտի և ձևավորման առաջավոր մեթոդների կիրառման վերաբերյալ տեսական և գործնական դասընթաց.՝ դեղձենու և արևելյան խուրմայի էտ: Դասընթացը կազմակերպվել է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող և ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) հետ համատեղ:

BfdW (ՀԱ) «Ներառական գյուղական կոոպերատիվների զարգացում, ենթակառուցվածքների վերականգնում և տեղական ՀԿ-ների կարողությունների հզորացում՝ համայնքների կայուն զարգացման համար» ծրագրի շրջանակներում Մարտունի, Թթուջուր, Բերդավան, Կոթի, Նավուր, Հարթավան գյուղերում գործող սպառողական կոոպերատիվների անդամների համար կազմակերպված դասընթացներ.

1. Կոոպերատիվի կառավարում
2. Կոոպերացիայի սկզբունքներ և արժեքներ
3. Կոոպերատիվների իրավական կարգավորման դաշտ
4. Բիզնես պլանավորում և շուկայավարում
5. Կոոպերատիվի հաշվապահություն

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (ՀՀ ԴՐԱՄ)





Եվրոպական միություն	173,703,454
Հաց Աշխարհին, Գերմանիա	140,807,747
ՀՀ Կառավարություն (ԵՄ ծրագրի համաֆինանսավորում)	97,844,065
ՀԷԿՍ-ԷՊԵՌ, Շվեյցարիա	59,675,312
Յալկեզյան հիմնադրամ, Կանադա	42,385,549
Օդմար Պիգե հիմնադրամ, Շվեյցարիա	38,040,761
ԳԶՄՀ (IFAD)	33,321,627
Համայնքների ներդրում	29,427,000
Շէն-Ֆրանսիա	20,323,817
Հրաչ Մարդիկյան	16,971,600
Անիվ հիմնադրամ, Հայաստան	15,000,000
ՀՀ Կառավարություն (ԱԱՀ ազատում)	5,954,658
ԱՄՔՈՐ Հայաստան հիմնադրամ	2,000,000
ՕքսԵՋԵն հիմնադրամ	1,000,000
Անդամավճարներ և այլ մասնավոր ներդրումներ	337,352
Ընդամենը	**676,792,942**

ԾԱԽՍԵՐ (ՀՀ ԴՐԱՄ)





Գյուղատնտեսական կոոպերատիվների հզորացում	315,797,434
Ենթակառուցվածքների բարելավում	158,267,741
Աշխատատեղերի խթանմանն ուղղված ծրագրեր	144,966,071
Մարքեթինգային խմբերի հզորացում	19,524,816
Սոցիալական աջակցություն	16,971,600
Բնապահպանական ծրագրեր	16,818,413
Համայնքների հզորացում	8,733,815
Վարչական ծախսեր	12,054,827
Ընդամենը	**693,134,717**